


ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՅԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London. W. [Angleterre]

Ամեն բան ժողովրդի մի-
ջոցով, ժողովրդի կամքով եւ
ժողովրդի անմար:

Իւրաքանչիւր եւ ընդհա-
նուր շուտադարձեալ բարե-
կեցիկ կենսութիւն — զաւէ՛
րիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԷ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ 5 ֆր.
ԿԷՍ ՏԱՐԵԿԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ 2 „

Ժողովրդ, դու ինքդ մի-
այն կարող եւ ձեռք բերել քո
ազատութիւնը:

Արեւան ճաշի՞նք — ահա
ազատութեան ճանապարհը:

Ժողովրդ, մի՛ աղերսիր,
այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԿԻՏԱՐԱՆԱԿԱՆ — ԳԵՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԳԻՍ

ԵՐՐՐՈՐԴ ՏԱՐԻ ԼՕՆԴՕՆ № 2. ՅՈՒՆԻՍ. № 2. 1896 Մ Ի Ա Մ Ս Ե Ա Յ



ՍՈՒԼԹԱՆԻ ՀԱՆԳԻՍՏԸ. ՈՐՏԵՂ Է.

Աշխարհի ամենէն թշուառ կարծուած մարդն ալ չպիտի փափաքէր Սուլթան լինիլ. փասն զի սուլթանը, հակառակ իր բոլոր սալ թանաթին ու իր ձօն հարկին, աշխարհի ամենաթշուառ արարածն է: Թշուառներ կան՝ որ արագհասակ են, կարեկցութիւն կը շարժեն. թշուառներ — թշուառականներ — ալ կան՝ որ ատելի են եւ գլուանք կը հրաւիրեն. այս վերջին թշուառներու կարգէն է սուլթան Համիտը: Այսօր իր իշխանութեան վրայ իր ոսկի գահը վրայ բազմած իր կուռք, այդ արիւնհարբու դահլիճի տնային իր աշխարհ առջեւ կը բերէ Հայաստանի մէջ իր հրամանով կատարուած վայրագութիւնները, տանտեակ հազարաւոր անմեղ Հայերու կոտորածներէն կազմուած բլուրները, արիւններէն գոյացած լիճերը, կրնդունիք թէ, յաղթական ժպիտ մը, հրապարակապէս հռչակուած արտայայտութիւն մը կը կարդացուի իր ժամտատեսիլ դէմքին վրայ. կամ երբ, իր հարեմի հրաշագեղ հիւրիներէն շքապատուած, ծայրայեղ հեշտութեան ու շուայտութեան մէջ կընկղմի ու կարեւոր, կընդունիք թէ, գուցէ վայրկեան մը ինքզինքը փոխադրուած կը կարծէ Մուհամմէտի խոստացած երանաւէտ ճէննէթին մէջ: Կրնդունիք թէ արեւան քստմենի տեսարաններուն մէջ եւ հեշտութիւններու ապականուած մթնոլորտին մէջ՝ վերապահուած են վայրկեանական — եւ վայրենական — հաճոյքներ սուլթանի համար: Բայց այն պիտակցութիւնը թէ իր թափել տուած այնքան անմեղ արեւան լիճերուն մէջ չի կրցաւ խեղդել հայ յեղափոխական շարժումը. այն մռայլ կասկածները, այն երկիւղալի տարակոյսները՝ որ ունի սուլթանը իր կեանքի անապահովութեան մասին. այն յուսահատական վիճակը՝ որուն ինքն իր ձեռքով մասնեց օսմանեան երկիրը, բայց որ այսօր այլ եւս կրսպառնայ մի անխուսափելի փոթորիկ, փոթորիկ՝ որ պիտի գահավիժէ զինքն ալ իր արիւններէն գահի բարձրութենէն. — այս բոլորը, որի մը պէս կը կրճեն վախկոտ սուլթանի սիրտը,

կը խռովեն անոր կարծատե քունը, կամրոխեն անոր հիւանդոտ միտքը, կը լարեն անոր դիւրագրգիռ ջղերը...
Եւ այս թուլամորթ, վախճուտ, միանգամայն շուարած ու ինքզինք կորուսած մարդն է, որ մենք կը նկատենք աշխարհի ամենախելուառ արարածը. բայց եւ միեւնոյն թշուառական մարդն է, որ այսօր իր ձեռքին մէջ ունի խամբողջ թուրքիոյ բաղքը, միլիոնաւոր ժողովուրդներու ճակատագիրը...
Եւ միտք մ'ի վեր է, զորոյ կը պտրտի թէ սուլթանը ծանրագէտ հիւանդացած է. բժիշկներն յայտարարել են թէ, անոր ողնաժուժն սպառած է... եւ պատուիրած են բացարձակ հանգիստ, հակառակ պարագային երկիւղ յայտնելով որ նա կը խելագարի... (), բացարձակ հանգիստ, ինչ սքանչելի դեղագիր բռնակալն մը համար...
Եւ, բժիշկները բացարձակ հանգիստ կը պատուիրեն սուլթանին, բայց... բայց անոր ստրուկ հպատակներուն յեղափոխական եւ ապստամբական գնդակներու որոտըն ու բռնաբանը շարունակ կը վրդովեն անոր հանգիստը, կը խանգարեն անոր մտքի ու սրտի հանգարտութիւնը: Եւր նա կը կարծէ թէ Հայաստան ընկճեցաւ, Կրետէն կը բարձրացնէ իր գոռոզ գլուխը. Զէյթունի փառաւոր դէպքերը կը կըրկնուին Կրետէի մէջ: Գեռ Կրետէն չհանդարտած՝ Մակեդոնիան կը խլրտի եւ դեռ հոն զրկուած վաշտերը չհասած՝ Տիւրքիները ոտք կեննեն: Մինչ Լէմէնի Լարբներուն վրայ կը կասկածի, թէ միտք ունին իր խալիֆայութեան վերջ տալ, Մէքքէի Լէմիւրը խալիֆա հռչակելով, եւ զօրք կը զրկէ անոնց վրայ, ահա «Լարիտասարդ թուրքերը» վեր կառնեն իրենց խոնարհ գլուխները, եւ մինչ Կ. Պօլսոյ մէջ Հայերը կախաղան բարձրացնելով կը կարծէ թէ Հայերը սարսափեցուց եւ վերջնական հարուածը տուաւ հայ յեղափոխութեան, ահա կը պայթին Վանայ յուլումները... Եւ վաղը... չենք ուզեր խօսիլ վաղուան վրայ...
Բժիշկները միասակար կը գտնեն սուլթանին երկարատե քնհատութիւնը եւ կը յանձնարարեն անխռով քուն. բայց այն ինչ բռնակալը կը փակէ իր ծանրացած արտաւանդները, գալարուն օձեր. գիտախել ուրուականներ, վրէժխնդիր բազուկներ՝ ըս-

պառնական դիրքով կարճանտան իր տուռէ, եւ այդ ամենէն ահաւոր կը պատկերանայ Պարսիկը... այո՛, այն անիծեալ Պարսիսիկը՝ որուն գնդակը վերջ տուաւ Շահ-Կեանքին, կարծես դեռ չէ լրացուցած իր եղեռնական պաշտօնը, եւ ամէն գիշեր, ունի վրէժ ի ձեռքին, կը խռովէ սուլթանի թրուոցիկ քունը: Չնայելով որ, այն չարաբաստիկ օրէն ի վեր, երբ սուլթանին հաղորդուեցաւ Շահին սպանութեան լուրը, ձերբակալուեցան 2000է աւելի Հայեր, թուրքեր եւ պարսիկ իշապաններ... — վասն զի Շահն սպաննողը Պարսիկ մ'էր, — դեռ չփարատեցան ցնորամիտ բռնակալին կասկածները. նա կը վախնայ որ ինքն ալ Պարսից վեհափառ ինքնակալին բաղդին կարժանանայ...
Բժիշկները կը վախնան որ, եթէ սուլթանը բացարձակ կերպով հանգիստ չընէ, պիտի խելագարի... բայց որովհետեւ հանգիստ ընելը բացարձակագէտ անկարելի է սուլթանին համար, մենք բոլորովին հաւանական կը գտնենք որ խելագարութիւնը, որը սուլթանական ազգատոհմին մէջ արդէն ժառանգական է, շուտով իր վճռական նըշանները ցոյց կուտայ սուլթան Համիտի անձին վրայ, եւ մի քեղեցիկ օր՝ նա վերջ կուտայ իր ձեռքով իր անտանելի կեանքին եւ կամ, բոլորովին մոլեգնած ու խելայեղուած, ոսկի շղթաներով կը կապուի եւ կը փոխադրուի այն յիմարանոցին մէջ, որ հեռու չէ իր հիմակուան բանտէն (պալատէն) եւ ուր փակուած կը մնայ արդէն իր տարաբաղդ մեծ եղբայր. եթէ սակայն մինչեւ այն ժամանակ չգործադրուի այն առաջարկը որ կընեն Պրիւքսէլի «Լարիտասարդ թուրքերը» — գահընկէց ընել սուլթանը եւ արքայի փոխարինել: Իսկ մենք կը մաղթենք որ, Մուհամմէտի ճէննէթին հիւրիներու ծոցին մէջ գտնէ թշուառ բռնակալը այն բացարձակ հանգիստը՝ որմէ զուրկ է երկրի վրայ:

“ՄԵՐՎԵՐԵԹ”Ի “ԱԶԱՏԱՍՏՈՒԹԻՒՆԸ”

Բարիցի “Մէշվերէթ” թուրք թերթը երեմիականներ կը կարգայ Կրետէի ապստամբութեան եւ Մակեդոնիոյ խլրաւումներու առթիւ: Այդ “ազատամիտ” թերթն Հայերու, Կրետացիներու, Մակեդոնացիներու եւ, առհասարակ, ունէ տոգոհ տարրերու մէջ անկախութեան ձգտումը կը պատապարտէ՝ իբր օսմանեան երկիրներու ամբողջութեան պահպան.

ԹԻՒՐԳԻՈՅ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ.





ՅԵՂԱՓՈԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՀԱՎԱՅՈՒՆՈՐԳՆԵՐԸ


ման գերագոյն սկզբունքին դէմ մահացու մեղք մը: Ո՛րչափ Հին Թուրքերը վնասեն Քրիստոնեաներուն և Երիտասարդ Թուրքերն անշարժ և անգործ կենան, դարձեալ պէտք չէ երբեք քրիստոնեայ ազգութիւնները Թուրքիայէն անջատման, անկախութեան և կամ նոյն իսկ ինքնավարութեան գաղափարն անցնեն իրենց մտքէն: Քրիստոնեաները պէտք է սպասեն որ «Երիտասարդ» Թուրքերը շափահասութեան հասնին և սկսին գործել. այն ատեն տեսնէք ինչեր պիտի ըլլայ. սահմանադրութիւն պիտի հաստատուի. «բարեկարգութեան և յառաջդիմութեան», դարապուլի պիտի բացուի ամենուն համար. դժգոհութեան ունէ անթի պիտի չմնայ... և այս ամէնը պիտի ըլլայ «խաղաղ միջոցներով — առանց բռնի միջոցներու, առանց ընդհարումի, առանց ցնցումի»: «Մէշվէրէթ»-ի սրամաքանութիւնը հետեւեալ կերպով կը հասկնանք. «Հին» Թուրքերը քանի որ հին մարդիկ են, ծեր են, անշուշտ անոնց օրհասը մօտ է և երթալով պիտի պակսին, մինչև որ մեան միայն «Երիտասարդ» Թուրքերը, որոնք, ինչպէս յայտնի է, «ազատամիտ» են. այդ երջանիկ օրը, արդէն ամէն բան ինքնին կարգի պիտի մտնայ, առանց մէկու մը քիթն արիւնելու: «Ամէն պարագայի մէջ, պէտք է պահպանուի Թուրքիոյ ամբողջութիւնը». — ահա «Մէշվէրէթ»-ի առաջին և վերջին խօսքը: Իսկ եթէ Թուրքիոյ կործանումը ճակատագրական է, կերևի, «Մէշվէրէթ» գոհ պիտի ըլլայ որ Թուրքիա իր ամբողջութեամբ կործանի:

Նաև «Մէշվէրէթ»-ի կարծիքով, Սալեզպրի,

կլատման, կլոտման, ֆրանսական դեսպան Գամպոն, Հ. Շարմիթան և ուրիշ շատեր շարաւար կը սխալին, երբ Թուրքերուն կը վերագրեն կրօնական մոլեռանդութիւն և քրիստոնեաները մասնաւոր կերպով պաշտպանութեան կարօտ կը նկատեն: «Մէշվէրէթ» կը պնդէ թէ, նոյն իսկ ներկայ կառավարութեան օրով, Թուրքիոյ մէջ կատարեալ կրօնական ազատութիւն կը տիրէ, մինչև անգամ Եւրոպայէն ու Ամերիկայէն ալ աւելի... պէտք է, կրէ «Մէշվէրէթ», Թուրքերն ալ վայելեն ճիշդ միեւնոյն չափով պաշտպանութիւն քրիստոնեայ պետութիւններէն: «Մէշվէրէթ» կանտեսէ որ այդ պաշտպանութիւնը, չնայելով որ մինչև հիմա ընդ անուանական եղած է, զոհը յարձակողին դէմ պաշտպանելու սահմանէն անդին չէ անցած: Մենք ալ կը փափաքէինք որ Եւրոպա իրական դարման մը տանէր այս չարիքներուն և, այն անունով որ թափեցին Իսլամները քրիստոնեաներու երակներէն, ազատուէին հաւասարապէս Իսլամներն ալ, քրիստոնեաներն ալ: Բայց, եթէ դժբաղդաբար դարուս քաղաքագէտներն այնչափ անկողմնակալ և ազատամիտ չեն, թող «Մէշվէրէթ» շատ չվերցնի անոնց կարծեցեալ միակողմանի պաշտպանութենէն. աւելի զոհողները քրիստոնեաներն են միշտ: Ամէն պարագայի մէջ, մենք կը կարծենք որ «Մէշվէրէթ» աւելի լաւ կընէ, եթէ, փոխանակ Սալեզպրիներու, կլատմաններու, Գամպոններու կրօնական ազատամտութեան դասեր տալու, նոյն դասերը տալ առաջնապէս իր իսլամ կրօնակիցներուն:

«ԸՊՏԵԿ»-Ի ՀԱՆՆԵԼՈՒԹՅՈՒՆԵՐ.
ԲԵՊՈՒՍ ԹԻԻ 3

$$1 + 9 \left(\frac{24 + 1200 + 14400}{2} \right)$$



ԹԻԻ 2 ԲԵՊՈՒՍԻ ԼՈՒԹՈՒՄԸ.

Ս-ու-տանի-մ-եռն-իլ-ըմ-Օտա-լ-ուտէ-նա-հիմ-ա-անկողնով պառկած-դեռ-ջարդե-ր-կը-սար-քէ: — Սուլթանի մեն/ը մօտալուտ է նա հիմա անկողնով պառկած դեռ ջարդեր կը սարքէ:

ՌԱՄԿԻՆ ԵՐԳԸ.

Մեզի կըսեն. ուսմ'կ էք,
Համբերատար պէտք է 'լլար.
Ձեր վիճակին վերայ չէք
Շատ շատ զաղտուկ պէտք է Լա.
Թըշուառութիւնն է ձեր մաս,
Ժընած էք չար աստղի տակ:

Այս խորատներ լըսելով
Միջիւ հիմա խաղաղեցանք.
Բայց այդ անշահ խօսքերէն
Գէթ մի կերպով օգտուեցանք. —
Ժիշը հակառակը շարժիւ
Մեր շահն ըլլաւ հասկըցանք:

Մեզի կըսեն. ըստրիկ էք,
Պէտք չէ ըլլար ըզգայուն.
Պէտք չէ ձեր սիրտ քարախէ,
Պէտք չէ տալնայ ձեր սրին.
Ձեր միտք պէտք չէ թըռչի վեր.
Ձեր կեանք ճահիճ է մայրուն:

Մեզի կըսեն. աղքատ էք,
Աղօթիւն է ձեր բաժին.
Թէ դարձեալ խեղճ անձար մտար,
Պէտք է փառք տաք Արարչին.
Երանի ձեզ. Թըշուառներ
Արքայութիւն պիտ թընին:

Մեզի կըսեն. հարուստին
Երկըրպագու եղէք միշտ.
Հնազանդ եղէք կըռներին,
— Կըստովի ձեր կենաց վիշտ.
Իշխողներուն ալ զըռու
Եւ հըպատակ եղէք ծիշդ:

Մեզի կըսեն. նօթի' էք,
Աշխատեցէք որ ապրիք.
Կամ՝ ծախեցէք ձեր պատիւ,
Թէ մարմնով էք գեղեցիկ.
Իսկ թէ տըգեռ, անկար էք,
Լաւագոյն է որ մեռնիք:

Մեզի կըսեն. մ'ունենար
Պահանջը, զանգատ կամ՝ բողոք.
Կընաք երբեմն աղքատիւ
Ողորմութիւն կամ՝ շընորջ.
Հաւատար կեանքն է պատրաստ
Եւ իրաւունքն ալ ջընորջ:

Այս խորատներ լըսելով
Միջիւ հիմա խաղաղեցանք.
Բայց այդ անշահ խօսքերէն
Գէթ մի կերպով օգտուեցանք. —
Ժիշը հակառակը շարժիւ
Մեր շահն ըլլաւ հասկըցանք:

ՌԱՋԻ.



**ԽՈՐՀՐԴԱՌՈՐ ՆԱՄԱԿ ՄԵ
ՍՏԱՑՈՒՄԸ ԼՈՐՏ ՍԱԼԱԳՐԻԷՆ.**

Վերջերս թղթաբեր աղանի մը, չգիտեմ որ տեղէն, յանկարծ երեցաւ Լօնտօնի մշու- շապատ միջնորդին մէջ և, աշուշտ բոլորովին պատահական կերպով, գնաց թաղեցաւ մարբիզ Սալագրիի տան պատուհանին վրայ:

Սալագրիի սենեկապանուհին բացաւ պատուհանը և ներս առաւ աղանին, որ շնչասպաս կը հեար. խեղճ թռչունը սաստիկ տաքցած, կրակ դարձած էր — յայտնի էր թէ շատ հեռու էն կուգար: Միսմիտ աղջիկը ելլէ կը գգուէր յոգնած աղանին, յանկարծ անոր թռչնի տակէն ինկաւ մի նամակ: Աղանին, ափշած, վեր առաւ նամակը և տարաւ ներկայացուց իր ազնուական տիրոջը: Մարբիզն ի զուր փորձեց կարգաւ այդ նամակը, որ գրուած էր սքանչելի ներբողութեամբ թղթի մը վրայ և որու գրերը չէին նմաներ երկրագնդիս և ոչ մի ազգին տառերուն, այլ աւելի կը յիշեցնէին եգիպտական հին մեհենագիրները, վասն զի գաղափարները նկարով էին պատկերացուցած: Ազնուական Մարբիզը սաստիկ հետաքրքրուելով և ուզելով իմանալ այդ նամակի բովանդակութիւնը — որ կրնար խիստ կարեւոր գաղտնիքի մը վերաբերիլ, — շուտով անոր բազմաթիւ օրինակներն առնել տուաւ լուսատպագրութեամբ (phototypie) և ցրուեց մեհենագիրներու բոլոր մասնագէտ լուծողներուն, կարգացողին խոստ տնայով առաւ պարգև: Մի քանի օր վերջ, Մըստր Զոլայ անուն անգլիացի գիտնական մը յաջողեցաւ լուծել այդ հանելուկի գիրը:

Նամակը գրուած էր Հրատ մոլորակի բնակիչներէն... — Գիտնականներուն կը թողունք բացատրել թէ ինչ կերպով աղանին կրցած էր անցնիլ Հրատի և երկրի մէջտեղ գտնուող երկրային դատարկութիւնը և ողջամբ հասնիլ մինչև մեր հողագին միջնորդը: Արեւի, հողագին գիտնականներուն անկարելի համարած բաները՝ Հրատի յառաջագիւմ բնակիչները յաջողած են կարելի վերածել... Ձիարդ և իցէ, Սըստր Զոլայի հասկացողութեամբ, այդ խորհրդաւոր նամակի բովանդակութիւնն հետեւեալն էր.

«Երկրի վայրենի բնակիչներուն»
«Նամակային Բ. ամիս, 6000-դ տարի քաղաքակրթութեան».

«Հաստնց ի վեր միջոց գտած էինք ձեր մոլորակի տեսարանները դիտելու. բայց այդ տեսարանները մեզ չէին հետաքրքրեր. սակայն, երկու տարիէ ի վեր, ձեր հողի վրայ մեր գիտած քրտմանի տեսարանները մեզ այնչափ ափշեցուցին ու կատրեցուցին, որ այստեղի հասարակաց կարծիքը սաստիկ յուզուեցաւ ձեր վայրենութեան ու բարբարոսութեան դէմ: Ահագին միջինի մը գումարեցինք, որուն ներկայ էին Հրատի զանազան կողմերէն 4.000.000 ժողովուրդ. ամենքս միաձայնութեամբ առինք մեր պարտաւանքի ու նախատանց քուէն ձեր կեղծ քաղաքակրթութեան դէմ և որոշեցինք մեր զայրոյթի ու զրգուանքի թուրն ու մուրը պարունակող այս նամակն ուղարկել ձեզ:

Ամենէն սոսկալէ տեսարանները գիտեցինք ձեր երկրի այն կողմերը, որ երկու մեծ գետեր կը ձեղքեն, ուր կայ բարձրաբերձ ձիւնապատ լեռ մը և սիրուն լճակ մը՝ մի քանի ծովերու միջև լեռնադաշտի մը վրայ: Ամօթ, հազար ամօթ ձեր երկրի բնակիչներուն՝ որոնք կը ներեն որ իրենց համասեռներուն դէմ այդպիսի վայրենութիւններ ի գործ դրուին:

Եթէ գուր ալ մի օր կարենաք շինել այնպիսի կատարելագործուած դիտակներ, որոնցմով կարենաք դիտել մեր մոլորակի տեսարանները, պիտի հիանաք տեսնելով թէ, ինչ կատարեալ ներգաշնակութիւն, ընկերհաշտութիւն և եղբայրութիւն կը տիրապետեն մեր մոլորակի բոլոր բնակիչներուն մէջ, որոնց անձանթ են ձեր բարբարոսական աւերիչ զէնքերն ու զփոխային մեքենաները, ձեր եղբայրասպան պատերազմները, կոտորածները և ամէն տեսակ վայրագութիւնները: Չեզ դէմ կարծակներ մեր

ամօթիդ դատաւիժութիւնը, իսկ լեռնադաշտի այդ տառապեալ ժողովուրդին կը յայտնենք մեր համակրութիւնը»:

«Հրատ մոլորակի միջինին ներկայ եղող հասարակութեան կողմէն»:

Սոյն նամակի ընթերցման ժամանակ, լուսն Սալագրիի երեսին վրայ ամօթի թռչնէ կարծկութիւն մը նշմարուեցաւ. և այս առաջին անգամն էր իր պաշտօնի անցած օրէն ի վեր...

ԽԱՅԹՈՅ.



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՈՒ ՍՈՒԳԻ ՀԱՆԴԵՍԸ

Ամերիկայի բարեկամ մը ծնող անցուցած ու մեզ յիշատակելի տղայի մը մասին համար այնտեղի հայ հայրենասէրներու նոր քարտեզը, անոնց միաձայն և գործնական կերպի վրայ կը շնչենք միայն մի քանի տնտեսներ անձի եւ տնտեսը.

Ե. Չ. Գ.


Ս. Բարթոլոմէոսի Հայկազեան Կաճառը կը հրաւիրէ Նիւ-Եորքի և շրջակայից Հայերը սփոյ հանգէս մ'ունենալ Մայիս 30-ին, Իճադիանց Բյուր Գերեզմանոցն. ի յիշատակ կատարման մէջ մեր նահատակէսը եղբարք. մինչ Ամերիկացիք իրենց նախորդ պատերազմին մէջ մեռող զօրաց տուն կը կատարեն:

Այս Կաճառս կարգադրած է մէկտեղ գալ յիշեալ օր, առաւօտեան ժամը 9. 30-ին, ի թիւ 209 Իսթ 42րդ փողոց, և ամէն հայու մետաքսեայ մի շքանշան տալ ձրի: Անտի թափար ելլել ժամը ճիշտ 10 ին, մինչև 4-րդ փողոցի արեւմտեան նաւամտոյցը, և առնել... կոբը, երթալ... փոխել կոբը և առնել... կոբը որ կը տանի գերեզմանոցն. ժամը 11. 30ին պաշտամունքը պիտի սկսի: Աստուծոյն պիտի ըլլան (անունը) հայերէն լեզուաւ և (անուն) Անգլերէն լեզուաւ:

Պաշտամունքէն զերբ օրուան մնացած մասը օգտակար կերպով գործածելու համար Կաճառս պատրաստած է մարգագետին մը գերեզմանոցէն քիչ մը հեռի. որ է *** պարտէզը, ուր պիտի կախնանք ճաշել ժամը 1. ին. սիրար Պետրոս Սալագրիան միայն պիտի վաճառէ իր շինած հողակի ան կերակուրները յետեւեալ գներով: Իրինձէ փիլա 5 սէնթ. շիշ քէպապը կանանչեղէնով 10 ս. խորբեր քիւֆթա 4 հատը 10 ս. խոշապ 5 ս. քիպէ 10 ս. փախլափ 5 ս. գարս-գալուրմա 10 ս. քիւլպասթի 10 ս. սալթա 5 ս. պալպալակ 5 ս. փորթուգալ 2 ս. լիմօնթայ գաւաթը 1 ս. սոստամէն տեսակ համեղէնով մեծ շիշը 10 ս.:

Կաճառս ջանացած է ամէն դիւրութիւններ ունենալ ընդհանուրի հանգստութեան ապրուստի և զուարճութեան համար. և կը փափար որ ամէն Հայ ներկայ ըլլայ ցուցնել ու իր զգացումն հայցելու Ամէ կարճեցունել թշուառութեան օրերն. և կազմուրուի բնութեան պարգևած առողջութեամբ.

Ի դիմաց կաճառին կարգադրի յանձնախումբ, (ստորագրութիւններ)



**ՀԵՌԱՅԻՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԸ ՓՈԽԱՐԴՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԱ.**

Պոստօն, 13 յունիս 96.

«Նիւ-Եորքի նշանաւոր հայասէր մը նոր օգտնաւ մը հնարեց, որով կարելի պիտի լինի Թուրքիոյ բոլոր Հայերն իրենց աներով, արտերով, Երարատ լեռան և Դոյնան տապանին հետ միասին, Ամերիկա փոխադրել մէկ անգամէն: Տեղւոյս վաճառականներէն ոմանք Ալապաճայի և Թէքսասի կողմերը վաղցին իրենց սիրելիները ողջագործելու. աւելի ազգասէրները Նիւ-Եորք փութացին՝ այնտեղի ջոջերուն հետ միասին հայ ողբի այս աննման բարեբարին ոտքերն համբուրելու:

14 յունիս.

Հայ քարոզիչներու և յօգուածագիրներու շրջանին մէջ մեծ յուզում պատճառեց օգտնաւի գիւտը: Յայտնի է թէ հոս անձնու էր հայ պատուիրներէն մի տհաքի բազմութիւն Հայաստանի սփռեց օգնելու նպատակաւ, զբաղած էր գաղափարութիւններ և հանգանակութիւններ կատարելու շաբաթականով, յանձնարարողէքով (commission) և կամ անձնական անկախ հաշիւներով: Հիմա պատուիրները կըսպասան գործ սկսել ընել:

15 յունիս.

Խորբերէն եկած հետադրերու համաձայն, երէկ հոս կատարուած ընտրութեանց մէջ՝ Լ. մե. իկայի Նոր-Հայաստան նահանգին կողմէն Գ. կրէսի ներկայացուցիչ ընտրուած է տիրար Պօլիկեան: Նախագահ Գլիվընտը Ուօլիկթընի թրքաց գեղապետաւոր պաշտօնական թուղթերէն տուեց թէ, թէ յիշեալ անձն երբեմն ինչ թանկ գին ծառայութիւններ մատուցեր է օսմանեան կառավարութեան, անմիջապէս ընտրութիւնը հաստատեց: Հայերու ոգևորութիւնն անկարգրելի է:

**ՀԱՅԵՐԸ ԳԱՂԱԹՅՆԵԼՈՒ ԺՐԱԳԻՐ Մ'ԸԼ
ԱՆԳԼՈՅ ԿՈՂՄԵՆ.**

Վերգրեալ հետադրերու հաղորդած լուրը մեծ յուզում և իրարանցում առաջ բերաւ Լօնտօնի քաղաքական շրջանակներուն մէջ: Հոսանք կը վարմանան թէ ինչպէս Հայկական խնդիրը (և Հայութիւնը) լուծելու այդպիսի պարզ և գործնական եղանակ մը չմտածուեցաւ մինչև հիմա Անգլիոյ մէջ ուր այնչափ բազմաթիւ բարեկամներ ունին Հայերը: Այս սքանչելի գաղափարի նախաձեռնութեան փառքը խելով համար Ամերիկացիներէն. Անգլիացիներն ալ անմիջապէս կազմեցին ծրագիր մը՝ որու նպատակն է Հայերն Հայաստանէն գաղթեցնել, և գիտէք ուր. — հարաւային Ափրիկէի անգլիական կառավարները, Նիասալանտ. հոն Հայերուն հողեր պիտի տրուին և անոնց բնակութեան համար կ'ընթերցանէր զիստի շինութիւն անգլիական ընկերութիւններու ծախքով: (Տե՛ղի Նիւզ)

Երա Սալագրի, որուն խորհուրդը հարցուեցաւ, շատ յարմար գտաւ այս գաղափարը և ըսաւ թէ՛ այս կերպով Հայերը, Անգլիոյ պաշտպանները, այսուհետեւ ալ չեն զգուցիր անգլիական պաշտպանութեան:

Որեմն Հայերուն խաթ խաթ աչքը ըլլաւ թող իրենց խարարները կապեն ու ճամբայ ինան, օրհնելով իրենց քաղաքակրթութեան օգնականները, որոնք կը բարեհաճին մարդասիրաբար իրենց տեղ տալ... վայրենի և անմարդաբան կերպիւրներու մէջ: ԿԱՐԻՃ.

ԻՍ ԿԱՊԱՐՔԵՆ

Կարծիք կար թէ՛ երբ հիւսիսային բնեւոր գտնուի, հոն ալ պիտի գտնուին Հայեր: Հիւսիսային բնեւոր գտնուեցաւ և հաստատուեցաւ թէ հոն կը գտնուին ոչ միայն Հայեր, այլ և այդ Հայերու մէջ ալ՝ անմիաբան ու թիւն:

— Սմանք կը պնդեն թէ, Բարիդի «Թան» լրագիրը թուրքաւոր թերթ մ'է. բայց «Թան» կը սիրէ ոչ թէ Թուրքը, այլ անոր կրօնի ոսկիները. քանի Թուրքը շուայէ իր ոսկիները, «Թան» ալ կը շուայէ իր գովասանքները. երբ այդ ոսկիներու հոսանքն ընդհատի, ինչպէս եղած է Թուրքիոյ այս վերջին ֆինանսական տագնապի միջոցին, «Թան»-ի գովեստի աղբիւրն ալ կը ցածրի և կըստի հակառակ գրել: Ի պատիւ «Թանի» ըսենք սակայն թէ, «Թան» ոչ առաջինն է և ոչ ալ վերջինը քամէլէնեան թերթերուն:

Ե. Չ. Գ.

«ԱՊՐԵԼ»-ի սպիտակ ամսվայ 12-րդ համարով աւարտում է նրա շաբաթական երկրորդ տարեշրջանը: Այն բաժանորդները, որոնք ցանկանում են նորոգել իրանց բաժանորդագրան «ԱՊՐԵԼ»-ի երրորդ տարեշրջանի համար, հարկւրում են անպակաս անել այդ:

ԼՕՆԻՕՆ. «ՀԵՂԵԿԻ» ԳՊԱՐՔԵՆ